ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՇՀԾՁԲ-15/14-ՀՔԾ-1 ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման /ՇՀ/ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան 31.01.2017թ.
Ժամը՝ 13:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Շ. Հարությունյան՝ Ծառայության աշխատակազմի ղեկավարի տեղակալ (գնահատող),

անդամներ՝

Ս. Ղազարյան՝ Ծառայության աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ (գնահատող),

Տ. Հարությունյան՝ Ծառայության աշխատակազմի գործերի կառավարչության պահեստապետ (բացող)

Ա. Հովհաննիսյան՝ Ծառայության աշխատակազմի գործերի կառավարչության համակարգչային մասնագետ (գնահատող)

Ա. Մնացականյան՝ Ծառայության աշխատակազմի անձնակազմի բաժնի պետ (բացող)

1. **ՇՀԾՁԲ-15/14-ՀՔԾ-1 ծածկագրով մրցույթի հայտերի բացման օրը, ժամը և վայրը.**

ՀՀ հատուկ քննչական ծառայության կարիքների համար Գրավոր թարգմանության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՇՀԾՁԲ-15/14-ՀՔԾ-1 ծածկագրով մրցույթի հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով armeps համակարգի միջոցով 2017 թվականի հունվարի 30-ին ժամը 11:00-ին, ք. Երևան, Վ. Վաղարշյան 13ա հասցեում:

Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և հասցեները.

Սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Հասցեն
1	Մաստեր Սթայլ ՍՊԸ	ք. Երևան, Սարմենի 1
2	Ֆինլոու ՍՊԸ	ք. Երևան, Մաշտոցի 17-25
3	ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍՊԸ	ք. Երևան, Դավիթ Անհաղթի 19/1-70
4	ՎԻ ԷՅՉ ԿԱ ՍՊԸ	ք. Աբովյան, 3-րդ մ/շ, 28/14
5	Կրթարան Սոնա ՍՊԸ	ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 21

2. **Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պանանջներին համապատասխանության մասին.**

Բոլոր մասնակիցների էլեկտրոնային հայտերը կազմված են հրավերի պահանջներին համապատասխան և համարվում են հետագա գնահատման համար ընդունելի:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. **Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

Մասնակից «ՎԻ ԷՅՉ ԿԱ» ՍՊԸ-ն մասնակցության դիմում չի ներկայացրել: Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման Հավելված 1-ի 45 կետի՝ հանձնաժողովը 30.01.2017 թվականի թիվ 2 որոշմամբ մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և վերոհիշյալ մասնակցին առաջարկել շտկել անհամապատասխանությունը՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը: Քանի որ «ՎԻ ԷՅՉ ԿԱ» ՍՊԸ-ն չի շտկել սխալը, առաջարկվում է մերժել վերջինիս հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. **Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

Մասնակիցներ «Մաստեր Սթայլ», «Ֆինլոու» և «Արթ քոնսալթինգ» ՍՊԸ-ների ներկայացրած հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերը կազմված են համապատասխան ՇՀԾՁԲ-15/14-ՀՔԾ-1 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին:

Իսկ «Կրթարան Սոնա» ՍՊԸ հայտը չի համապատասխանում հրավերի 1-ին մասի 7.9 կետի պանանջներին, որի համար հանձնաժողովը առաջարկում է մերժել վերջինիս հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. **Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

Բոլոր մասնակիցները ներկայացրել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի և հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկներ:

Մասնակիցների գնային առաջարկներում գները նշված են առանց ԱԱՀ–ի և ԱԱՀ-ով:

/աղյուսակ 1/

ՀՀ դրամ

Չափաբաժին	Նախահաշվային գին	«Մաստեր Սթայլ» ՍՊԸ		«Ֆինլոու» ՍՊԸ		«Արթ քոնսալթինգ» ՍՊԸ		«ՎԻ ԷՅՉ ԿԱ» ՍՊԸ		«Կրթարան Սոնա» ՍՊԸ	
		Գին առանց ԱԱՀ	Գին ընդհանուր	Գին առանց ԱԱՀ	Գին ընդհանուր	Գին առանց ԱԱՀ	Գին ընդհանուր	Գին առանց ԱԱՀ	Գին ընդհանուր	Գին առանց ԱԱՀ	Գին ընդհանուր
Գրավոր թարգմանության ծառայություն	1350000	6000	6000	6000	6000	5500	5500	3333.33	4000	1890	1890

5.2. Բոլոր մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալները համապատասխանությունը/, ինչպես նաև թվաբանական ճշտությունները համապատասխանում են, բացի «Կրթարան Սոնա» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկից: «Կրթարան Սոնա» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկում ընդհանուր գինը տառերով գրված չէ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Տվյալներ՝ տվյալ պահին առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

1-ին տեղ՝ «Արթ քոնսալթինգ» ՍՊԸ

2-րդ տեղ՝ «Մաստեր Սթայլ» ՍՊԸ և «Ֆինլոու» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

7. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն եղել:

8. **Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը.**

ՇՀԾՁԲ-15/14-ՀՔԾ-1 ծածկագրով մրցույթի ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 2017 թվականի փետրվարի 3-ին ժամը 14[00]-ին, ք. Երևան, Վ. Վաղարշյան 13[ա] հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Շ. Հարությունյան

Անդամներ՝

Ս. Ղազարյան

Տ. Հարությունյան

Ա. Հովհաննիսյան

Ա. Մնացականյան

Նիստի քարտուղար՝ Դ. Գրիգորյան